ԿԱՐՃԻՔ

Արսեն Սլավիկի Ռոքոյանի «Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում առևտրային բանկերի հիմնական գործունեությունը կապված է ավանդական վարկավորման հետ: Այս համատեքստում ՀՀ առևտրային բանկերի համար վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրն ունի կենսական մեծ նշանակություն: Վարկային և պարտքային քաղաքականութունն առևտրային բանկերի ռիսկերի կառավարման հիմնական բաղադրիչներից են: 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամը վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտության խնդրին առավել մեծ կարևորություն է հաղորդել:

Հետազոտական թեմայի ընտրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից ֆինանսական շուկաների արագ զարգացումը և անընդհատ փոփոխություններն առևտրային բանկերի համար ստեղծում են նոր մարտահրավերներ այդ զարգացումներին և փոփոխություններին ինտեգրվելու գործընթացում: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում վարկային ռիսկի գնահատման գործընթացում կիրառել նոր և ապագային միտված (forward looking) գործիքակազմ և մոտեցումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի գնահատման և կառավարման մեխանիզմները, միջազգային փորձը, և դրանց հիման վրա առաջարկել վարկային ռիսկի գնահատման և կառավարման արդյունավետության բարձրացմանը նպաստող մեխանիզմներ և գործիքակազմ՝ հաշվի առնելով նաև ֆինանսաբանկային համակարգում ներկայում տեղի ունեցող փոփոխությունները: Այս նպատակի իրագործման համար հետազոտության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման մեխանիզմները և մոդելները,
- Հետազոտել ֆինանսաբանկային համակարգում վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, համաշխարհային ֆինանսակաբանկային շուկաների փորձը՝ ապագային ուղղված մեխանիզմների մշակման հնարավորություն ստանալու համար,
- Ցույց տալ նորագույն տեխնոլոգիաների օգտագործման անհրաժեշտությունը ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար,
- Մշակել մոդել, որը հաշվի է առնում վարկային ռիսկի կառավարման ավանդական գործոնները և միաժամանակ հիմնված է նոր տեխնոլոգիաների և ֆինանսական շուկաներ մուտք գործող նոր մեխանիզմների վրա,
- Գնահատել ստեղծված մոդելի գործնական օգտագործման արդյունավետությունը,
- Հաշվի առնելով իրականացված հետազոտություններն՝ առաջարկել սեփական նորարական փոփոխությունների և մոտեցումների վրա հիմնված գործիքակազմի կիրառում, որն ուղղված կլինի վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, թվով 5 հավելվածներից: Այն շարադրված է 108 համակարգչային էջերի վրա՝ ներառյալ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը, պարունակում է 8 աղյուսակ, 4 գծապատկեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Իրականացված հետազոտության արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնց որպես գիտական նորույթ կարող են առանձնացվել հետևյալները.

- Առանձնացվել են ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման գործընթացում առկա մի շարք խնդիրներ և ներկայացվել են դրանց որոշակի լուծումներ:
- առաջարկվել է առևտրային բանկերում վարկային ռիսկի գնահատման և կառավարման գործիքակազմում ներառել արհեստական բանականություն (AI՝ artificial intelligence), որի միջոցով համատեղելով վարկային ռիսկի գնահատման և կառավարման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, առևտրային բանկերը հնարավորություն կունենան առավելագույն արդյունավետությամբ կառավարելու վարկային ռիսկը: Հիմնավորվել է այս գործիքակազմի օգտագործման դեպքում վարկային ռիսկի գանահատման համար անհրաժեշտ տեղեկատվության մշակման և պահպանման համար “Big Data” և “Blockchain” տեխնոլոգաների կիրառությունը:

Ներկայացված աշխատանքի կարևորությունը կայանում է նրանում, որ վեր են հանվում ժամանակակից և ապագային միտված ֆինանսական շուկայի գործիքները, ներկայացվում է դրանց կարևորությունը բանկային համակարգի համար,

հատկապես շեշտադրելով բանկի ակտիվային գործունեությունում տեղի ունեցող և ունենալիք փոփոխությունները: Ներկայացվում են այն անհրաժեշտ գործողությունները, որոնք պետք է իրականացվեն բանկերի կողմից վարկային ռիսկի կառավարման գործընթացներում՝ մրցակցային նոր պայմաններին և ֆինանսական շուկայի փոփոխություններին դիմագրավելու համար:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ և առաջարկություններ, , որոնք հեղինակի կողմից հաշվի առնելու դեպքում աշխատանքն առավել կշահեր, մասնավորապես.

1. Նշվում է, որ ՀՀ բանկերին վարկառուների մասով հասանելի է շատ քիչ տեղեկատվություն (էջ 73), սակայն գրեթե նշում առկա չէ (շատ հպանցիկ են նշվում քարտային գործառնությունները, բջջային հեռախոսները, սոցիալական կայքերը), թե ինչպես պետք է այդ հասանելիությունը մեծանա, նամանավանդ, որ հիմնական առաջարկը մեծ տվյալների օգտագործելն է: Այս տեսանկյունից հեղինակը կարող էր անդրադառնալ, թե ինչպես է տեսնում ՀՀ-ում տարբեր ենթակառուցվածքների միջև տեղեկատվության փոխանակման (open API) հնարավորությունը, ստվերային տնտեսության նվազումը (տեղեկատվության մեծացմանը),

2. Կրիպտոարժույթների վարկային ռիսկը գնահատվել է այն հիմնավորմամբ, որ վաղ թե ուշ բանկային համակարգը պետք է այն ներառի իր ակտիվներում (էջ 86): Այս պարագայում թերևս կարելի էր անդրադառնալ, թե ներկայում ինչ մոտեցումներ ունեն կենտրոնական բանկերը կրիպտոարժույթներին,

3. Նյութում վարկային ռիսկի կառավարման պրակտիկան, տեսությունը ներկայացնելիս հիմնականում անդրադարձ է կատարվել վարկի տրամադրման գործընթացին, սակայն կարելի էր նաև անդրադառնալ վարկային ռիսկի

կառավարմանը այլ գործընթացներին և դրանցում առկա խնդիրներին, օրինակ՝ խնդրահարույց ակտիվների հետ տարվող աշխատանք և այլն,

4. Աշխատանքում գրեթե ոչինչ ներկայացված չէ, թե ինչպես է Blockchain տեխնոլոգիան կիրառվում վարկային ռիսկի գնահատման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում կատարված աշխատանքով հեղինակի կողմից ձեռք բերված արդյունքները: Կարծում եմ, որ Արսեն Սլավիկի Ըռքոյանի «Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
Վ. Հ. Ավետիսյան
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
03.05.2022թ.

ՀՀ ԿԲ գլխավոր քարտուղար
Վահե Պետրոսյան
Ստորագրությունը
հաստատում եմ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
СЕКРЕТАРИАТ
SECRETARIAT